



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 5

29 հունվարի 2021 թվականի

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև 34-րդ և 46-րդ կետերով, առաջնորդվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անխափան աշխատանքն ապահովելու անհրաժեշտությամբ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգում ավելացնել 3.13 կետը՝ հետևյալ ձևակերպմամբ. «3.13. Խորհրդի նախագահի լիազորությունների դադարման դեպքում խորհրդի քարտուղարը (եթե տվյալ բուհում սովորող չէ) ժամանակավորապես ստանձնում է նախագահի լիազորությունները՝ մինչև խորհրդի կողմից նախագահի ընտրության մասին որոշման կայացումը: Նախագահի և քարտուղարի լիազորությունների դադարման պայմաններում խորհրդի նախագահի լիազորություններն իրականացնում է տարիքով ավագ անդամը, իսկ քարտուղարի լիազորությունները՝ կրտսեր անդամը»:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.13. Խորհուրդը ձևավորվելուց հետո իր կազմից ընտրում է նախագահ (բացի ուսանողության ներկայացուցիչներից) և քարտուղար»:

Հոգաբարձուների խորհրդի նիստը նախագահող՝

Ա. Չուբարյան